# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՀՈԴՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Համալսարանի «Գիտական տեղեկագիր» հանդեսում հոդվածներ կարող են ներկայացվել հետևյալ ուղղություններով.

- Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
- Կենսաբանական գիտություններ (գյուղատնտեսություն)
- Գիտություններ Երկրի մասին
- Տեխնիկական գիտություններ
- Տնտեսագիտություն
- Պատմական գիտություններ
- Բանասիրական գիտություններ
- Մանկավարժական գիտություններ (այդ թվում՝ դասավանդման մեթոդիկաներ)
- Հոգեբանական գիտություններ
- Արվեստագիտություն

Հրատարակվելու համար ներկայացվող հոդվածը պետք է բավարարի ներքոնշյալ պահանջներին.

1. Հոդվածները ներկայացնել Word միջավայրում՝ ձևակերպված հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներից որևէ մեկով:
2. Թուղթը՝ A4 ձևաչափի, գրքային:
3. Լուսանցքները՝ վերևից, աջից, ձախից՝ 4 սմ, ներքևից՝ 5 սմ:
4. Տառաչափը՝ 12pt:
5. Տառատեսակը՝ հայերենի դեպքում՝ Sylfaen, ռուսերենի, անգլերենի դեպքում՝ Times New Roman:
6. Միջտողային հեռավորությունը՝ 1pt:
7. Աշխատանքի բնագավառը, ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման) նիշը (https://udcsummary.info/php/index.php?lang=hy&pr=Y, https://teacode.com/online/udc/ կամ http://www.prometeus.nsc.ru/biblio/class.ssi) առաջին տողում՝ բնագրի լեզվով, գլխատառերով, հավասարեցումն ըստ լայնքի, թավ *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:

8. Աշխատանքի երկրորդ տողում խմբագրության կողմից լրացվում է DOI համարանիշը *(խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:
9. Աշխատանքի վերնագիրը երրորդ տողում՝ բնագրի լեզվով, գլխատառերով, հավասարեցումը՝ կենտրոնից, թավ *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:
10. Հեղինակ(ներ)ի ազգանունը, անվան ու հայրանվան առաջին տառերը չորրորդ տողում՝ բնագրի լեզվով, հավասարեցումը՝ կենտրոնից, թավ:
11. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հակիրճ բնութագիրը բնագրի լեզվով, 150-250 բառի սահմանում, հավասարեցումը երկկողմանի, ուղիղ, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:
12. Հաջորդ տողից հետո ներկայացնել աշխատանքի բանալի բառերը բնագրի լեզվով ՝ մինչև 10 բառ, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:
13. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել 9-12 կետերի տեղեկատվությունը ռուսերեն և անգլերեն, եթե բնագրի լեզուն հայերենն է, հայերեն ու ռուսերեն, եթե բնագրի լեզուն անգլերենն է, հայերեն ու անգլերեն, եթե բնագրի լեզուն ռուսերենն է:
14. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել նախաբանը՝ հոդվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում, արդիականության և նորույթի հիմնավորում (1 էջը չգերազանցող):
15. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել հոդվածի հիմնական բովանդակությունը:
16. Աշխատանքում առկա փոխառված մտքերի ու մեջբերումների համար հղումների առկայությունը պարտադիր է: Հղումները տեքստում ներկայացնել քառակուսի փակագծերի մեջ՝ նշելով տվյալ աշխատանքի համարը գրականության ցանկից՝ [1], [5-7] *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:
17. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է իրականացնել *Math Type* կամ *MS Equation* բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի (1), (2),…, համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա:

Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել: Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:

18. Աղյուսակները պետք է ներկայացվեն հստակ տողերով և սյուներով՝ վերնագրված և համարակալված:
19. Գրաֆիկական նյութը և նկարները պետք է ներկայացվեն հստակ, վերնագրված և համարակալված: Դրանք հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս):
20. Բաց թողած 1 տողից հետո ներկայացնել եզրահանգում (0,5 էջը չգերազանցող)՝ ներառելով աշխատանքում ստացված հիմնական արդյունքները:
21. Բաց թողած 1 տողից հետո անհրաժեշտության դեպքում ներկայացնել հետազոտության ֆինանսավորման աղբյուրը բնագրի լեզվով՝ հավասարեցումը երկկողմանի, շեղ (օրինակ՝ *Հետազոտությունն իրականացվել է ԵՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝* ____________ *գիտական թեմայի շրջանակներում*) *(խմբագրված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:
22. Գրականության ցանկի տարրերը պետք է ներկայացնել ըստ ներքոնշյալ օրինակների.

<u>Գրքերի օրինակներ.</u>

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Будак Б. М., Фомин С. В. Кратные интегралы и ряды. М.: Изд.-во «Наука». 1967. 608 с.
3. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986. 383 p.

<u>Ամսագրերի/պարբերականների օրինակներ.</u>

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկան բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
2. Пальмов В. А. Основные уравнения теории несимметричной упругости // Прикладная математика и механика. 1964. Т. 28. Вып. 6. С. 1117-1120.
3. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics.

1973. Vol. 5. № 3. P. 547-561.

4. Sargsyan A., Sargsyan S. Geometrically Nonlinear Models of Static Deformation of Micropolar Elastic Thin Plates and Shallow Shells // Journal of Applied Mathematics and Mechanics (Gesellschaft f. Angewandte Mathematik und Mechanik). 2020. Vol. 101, Issue 5. DOI: https://doi.org/10.1002/zamm.202000148

<u>Ժողովածուի օրինակներ.</u>

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Մ. Ն. Հայերի մշակութային արժեքային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: Էջ 80-83:
2. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
3. Kolesnikov A. M., Popov A. V. Pure bending of a pressurized curved tube // Proceedings of the International Conference Shell Structures: Theory and applications. 16-18 October, 2013. Gdansk, Poland. Taylor&Francs Press. London. 2014. P. 113-116.

<u>Էլեկտրոնային աղբյուրի օրինակ</u>.

1. http://shsu.am/media/journal/2019n1a/bovandakutyun.htm (05.05.2020)

23. Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 10 էջը: Բոլոր էջերը պետք է համարակալվեն ներքևից՝ կենտրոնում:
24. Առանձին փաստաթղթով («տվյալներ հեղինակի մասին»), հոդվածի լեզվով հարկավոր է ներկայացնել սպառիչ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին՝ նշելով անուն, ազգանուն, հայրանուն (առանց համառոտագրելու), գիտական աստիճան, գիտական կոչում, հեռախոս, էլեկտրոնային հասցե (e-mail), աշխատավայր, այն հաստատությունը, որտեղ կատարվել է հետազոտությունը:
25. Հոդվածները հարկավոր է ուղարկել shsu.science@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Ստորև ներկայացվում է հոդվածի նմուշ:

ՀՏԴ ---
ԲՆԱԳԱՎԱՌԸ

DOI

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԵՆ

**Ազգանուն Ա. Հ.**

Հոդվածի հակիրճ բովանդակությունը հայերեն՝ հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt, 150-250 բառի սահմանում, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:

**Բանալի բառեր**՝ մինչև 10 հայերեն բառ, հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt:

## ЗАГОЛОВОК РАБОТЫ НА РУССКОМ

**Фамилия И. О.**

Հոդվածի հակիրճ բովանդակությունը ռուսերեն՝ հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt, 150-250 բառի սահմանում, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը *(լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:

**Ключевые слова:** մինչև 10 ռուսերեն բառ, հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt:

## TITLE OF THE WORK IN ENGLISH

**Surname N. Middle name**

Հոդվածի հակիրճ բովանդակությունը անգլերեն՝ հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt, 150-250 բառի սահմանում, որտեղ պետք է արտացոլվի աշխատանքի գիտական նորույթը *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:

**Key words:** մինչև 10 անգլերեն բառ, հավասարեցումն ըստ լայնքի, ուղիղ, տառաչափը՝ 12pt:

**Նախաբան**՝ հոդվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում, արդիականության և նորույթի հիմնավորում (1 էջը չգերազանցող):

Հոդվածի հիմնական բովանդակությունը:

1. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է ներկայացնել Math Type կամ MS Equation բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի՝(1), (2),…: Համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել:

$$\frac{1}{r}\frac{\partial\sigma_{12}}{\partial\varphi}+\frac{1}{r}\sigma_{22}+\frac{\partial\sigma_{22}}{\partial r}-\frac{1}{r}\sigma_{11}=\rho\frac{\partial^2 V_2}{\partial t^2} \qquad (1)$$

2. Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:

3. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:

**Աղյուսակ 1. Աղյուսակի վերնագիրը** *(լրամշակված՝ գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*:

| $\omega_1\times10^5$ (ГЦ) | $\omega_2\times10^5$ (ГЦ) | $\omega_3\times10^5$ (ГЦ) | $\omega_4\times10^5$ (ГЦ) |
|---|---|---|---|
| 1 конечный элемент | | | |
| 58.286 | 0.28855 | 4.73570 | 58.500 |
| 2 конечный элемент | | | |
| 58.286 | 0.13384 | 4.73204 | 58.499 |
| 4 конечный элемент | | | |
| 58.286 | 0.12912 | 4.73151 | 58.499 |
| 8 конечный элемент | | | |
| 58.286 | 0.12899 | 4.73151 | 58.499 |

4. Գրաֆիկական նյութը պետք է լինի հստակ, չպահանջի լրացուցիչ խմբագրում: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս): Գրաֆիկները ևս պետք է վերնագրվեն և համարակալվեն:




**Նկար 1. Նկարի անվանումը** *(լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում)*

5. Հոդվածում պարտադիր են հղումներ գրականության ցանկում նշված բոլոր աշխատանքներին՝ [1], [2-4]…

**Եզրահանգում՝** աշխատանքում ստացված հիմնական արդյունքների ներկայացում (0,5 էջը չգերազանցող):

*Ֆինանսավորման աղբյուր. հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ ____________ գիտական թեմայի շրջանակներում) (լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 26-ի նիստում):*

## Գրականություն

1. Sargsyan A., Sargsyan S. Geometrically Nonlinear Models of Static Deformation of Micropolar Elastic Thin Plates and Shallow Shells // Journal of Applied Mathematics and Mechanics (Gesellschaft f. Angewandte Mathematik und Mechanik). 2020. Vol. 101, Issue 5. DOI: https://doi.org/10.1002/zamm.202000148
2. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
3. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկան բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
4. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней

асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
5. http://shsu.am/media/journal/2019n1a/bovandakutyun.htm(05.05.2020)